

**ՀՀ Արագածոտնի մարզպետարանի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ  
N ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5-ԿՐԹԱԿԱՆ-5**

ք. Աշտարակ

12 հունիս 2014 թ.

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Գ. Գևորգյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և Գրեղշին ՍՊԸ -ն, ի դեմս Ընկերության տնօրեն Գ. Կարապետյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Ձորագլուխ համայնքի դպրոցի վերանորոգում աշխատանքները (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված Աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, Աշխատանքի նախագծին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող Աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ մինչև 2014թ. դեկտեմբերի 10-ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքները, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

**2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ**

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

**3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետ (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ «՝ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է սույն պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ Աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած Աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ Աշխատանքի արդյունքը՝ սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

## **3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին սույն պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Սույն պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված Աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ Աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել Աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

## **3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում Աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու սույն պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն

վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### **3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել ան պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Սույն պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից Աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել Աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել սույն պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Սույն պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել Աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները: Սույն պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում պատվիրատուի կողմից ուժ ծավալով աշխատանքն ընդունելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում, վերացնել թերությունները:

3.4.9 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## **4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն, Հավելված N 4) ստորագրմամբ:

Աշխատանքի կատարման պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուն Պատվիրատուին է ներկայացնում այդ աշխատանքների մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված Աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

1) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

2) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 7օրյա ժամկետում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

2) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի N 626-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև պայմանագրի կատարման արդյունքը ընդունելու մասին հանձնարարությունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, *իսկ տարածամկետը վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի 5 տոկոսից:*

4.6 Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

4.7 Պատվիրատուի կողմից աշխատանքները փուլերով ընդունելու դեպքում, երբ Պատվիրատուի կողմից հայտնաբերվում են նախկինում ընդունված աշխատանքների վերաբերյալ անհամապատասխանություններ, ապա Պատվիրատուն իրավունք ունի կատարել անհրաժեշտ փոփոխություններ նախկինում ընդունված աշխատանքները արձանագրած փաստաթղթերում (կատարողական ակտ, հանձնման-ընդունման ակտ և այլն)՝ այդ մասին տեղեկացնելով Կապալառուին:

Այն դեպքում, երբ նման փոփոխությունները հանգեցրել են նախկինում ընդունված աշխատանքների համար վճարված գումարի փոփոխության անհրաժեշտության, ապա Կապալառուի կողմից հերթական հանձնման-ընդունման ակտով ներկայացված աշխատանքների համար Պատվիրատուն վճարում է՝ նվազեցնելով վճարման ենթակա գումարը անհամապատասխանության չափով:

Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի կատարման համար պայմանագրի գինը վճարել է ամբողջությամբ, ապա Կապալառուն պարտավոր է վճարել Պատվիրատուին սահմանված գումարը այդ մասին պահանջը ստանալու պահից յոթ օրվա ընթացքում:

## **5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 26 200 000 քսանվեց միլիոն երկու հարյուր հազար ՀՀ դրամ, որից 4 366 667 չորս միլիոն երեք հարյուր վաթսուներկու հազար վեց հարյուր վաթսույնյոթ ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

5.4 Պատվիրատուն վճարում է Աշխատանքի կամ սույն պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ սույն պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա սույն պայմանագրի N 3 Հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում

(եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Աշխատանքի դիմաց վճարելու համար N 3 Հավելվածով տվյալ ժամանակահատվածում նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 25-ը՝ պայմանով, եթե Աշխատանքը կատարված է պատշաճ և սույն պայմանագրով սահմանված ժամկետներում կամ Պատվիրատուի համաձայնությամբ՝ ժամկետից շուտ:

## **6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Սույն պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:

6.4 Սույն պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 5.4 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## **7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա

կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կապալառուին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կապալառուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

8.2 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցու, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Սույն պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքների ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Եթե ենթակապալի միջոցով իրականացվում է պայմանագրի ավելի քան քսանհինգ տոկոսը, ապա՝

1) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխություններ իրականացվում է Պատվիրատուի համաձայնությամբ:

2) Կապալառուն է պատասխանատվություն կրում ենթակապալառուի պարտավորությունների համար:

Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում:

պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

8.5 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) պայմանագրով նախատեսված Աշխատանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

8.7 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.8 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.9 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Արագածոտի մարզպետարան»


«Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի վ.

Պետրոսյան 4

«Ֆինանսների նախարարության

գործառնական վարչություն»

h/h 900441000065 ՀՎՀՀ 05004247



### Կապալառու

«ԳՐԷՂՇԻՆ» ՍՊԸ


«Արագածոտնի մարզ գ. Փարպի

Յունիբանկ ՓԲԸ Աշտարակ մ/6

ՀՎՀՀ՝ 05017392

h/h 24122000074900

Տնօրեն՝





Կարապետյան





**ԾԱԿԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ**  
Ձորագլուխ համայնքի դպրոցի վերանորոգում ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ



Գ/Գ	Աշխատանքի նկարագիր	Չ/մ	ՔԱ-ՆԱԿ	Միավորի արժեքը	Ընդամենը
				հազար ՀՀ դրամ	հազար ՀՀ դրամ
1	2	3	4	5	6
<b>Հողային աշխատանքներ</b>					
1	1-262 1-272	բնահողի տեղափոխում բուլղո գերով տեղափոխելով 10 մ	1000մ <sup>3</sup>	0.009	100.000
2	1-1130	Տարածքի պլանավորում մեխանիզմով	100մ <sup>2</sup>	0.9	20.000
3	1-1132	Տարածքի հարթեցում ձեռքով	100 մ <sup>2</sup>	0.90	20.000
4	1-57	Խրամուղու փորում մեխանիզմով 3-րդ կարգի	1000մ <sup>3</sup>	0.046	500.000
5	1-961	Բնահողի մշակում ձեռքով 3-րդ կարգի	մ <sup>3</sup>	16.0	5.000
6	1-970	Բնահողի լիցք հատակների տակ/տոփամուկ/	մ <sup>3</sup>	32.3	3.000
7	11-2.	Բնահողի տոփամուկ ձեռքով	100մ <sup>2</sup>	0.362	30.000
8	1-970	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	8.3	3.000
9	11-6.	Խճի նախաշերտի կառուցում 100 մմ	մ <sup>3</sup>	3.6	10.000
10	1-970	Բնահողի ետլիցք ձեռքով	մ <sup>3</sup>	29.7	3.000
<b>Հիմքեր</b>					
1	6-21	Բուտաբետոնե հիմքերի կառուցում 4-7,5	մ <sup>3</sup>	25.1	44.000
2	6-1	Բետոնե նախաշերտ 4 - 7.5 բետոնից 100 մմ	մ <sup>3</sup>	3.60	40.000
3	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-500С/	տն	0.0316	400.000
4	15-10 15-59	Ցոկոլի երեսպատում բազալտե սալերով-3սմ	մ <sup>2</sup>	16.00	10.000
5	6-128	Ցոկոլի թիկունքի բետոնացում 4-12.5 բետոնից	մ <sup>3</sup>	8.2	40.000
6	6-106	Միաձույլ ե/բ սյունների պատրաստում 4-15 բետոնից	մ <sup>3</sup>	10.56	80.000
7	Շուկա	Ամրան Ա-1-6մմ	տն	0.0754	400.000
8	Շուկա	Ամրան Ա-1-8մմ	տն	0.1226	400.000
9	Շուկա	Ամրան Ա-500С-12 մմ	տն	0.1136	400.000
10	Շուկա	Ամրան Ա-500С-18 մմ	տն	0.3756	400.000
11	6-106	Միաձույլ ե/բ միջուկների պատրաստում 4-15 բետոնից	մ <sup>3</sup>	2.24	80.000
12	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.0498	400.000
13	Շուկա	Ամրան Ա-500С	տն	0.0995	400.000
14	6-160	Միաձույլ ե/բ հիմնային հեծանների կառուցում Բ-15 բետոնից	մ <sup>3</sup>	2.24	80.000
15	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.0498	400.000
16	Շուկա	Ամրան Ա-500С	տն	0.0995	400.000




17	6-161	Միաձույլ ե/բ հեծանների կառուցում Բ-15 բետոնից	մ <sup>3</sup>	4.8	80.000	384	000
18	Շուկա	Ամրան Ա-1 - 8 մմ	տն	0.1264	400.000	50	560
19	Շուկա	Ամրան Ա-500 Ե - 18 մմ	տն	0.3792	400.000	151	680
20	6-168	Ե/բ միաձույլ գոտու կառուցում Կ-15 բետոնից	մ <sup>3</sup>	10.08	60.000	604	800
21	Շուկա	Ամրան Ա-1-6 մմ	տն	0.215	400.000	86	000
22	Շուկա	Ամրան Ա-500C-12 մմ	տն	0.3101	400.000	124	040
23	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-500C-10մմ/	տն	0.0511	400.000	20	440
24	6-170	Ե/բ միաձույլ գոտի - բարավորի կառուցում Բ-15 բետոնից	մ <sup>3</sup>	2.13	80.000	170	400
25	Շուկա	Ամրան Փ6,Ա-1	տն	0.0227	400.000	9	080
26	Շուկա	Ամրան Փ12,Ա 500Ա,	տն	0.0185	400.000	7	400
27	6-145	Ե/բ միաձույլ երիզվածքի կառուցում մինչև 20սմ հաստ, Բ-15 բետոնից	մ <sup>3</sup>	0.84	80.000	67	200
28	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.05096	400.000	20	384
29	8-163	Պատերի շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ <sup>3</sup>	61.40	25.000	1535	000
30	8-59	Պատի շարվածքի ամրանավորում	տն	0.18813	400.000	75	252
31	7-487.	Հավաքովի ե/բ ծածկի սայերի տեղա- դրում	հատ	24.0	15.000	360	000
32	Շուկա	Հավաքովի ե/բ ծածկի անցքավոր սայ	մ <sup>2</sup>	123.48	10.000	1234	800
33	6-161	Միաձույլ ե/բ հեծանների կառուցում Բ-15 բետոնից	մ <sup>3</sup>	4.28	80.000	342	400
34	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.1224	400.000	48	960
35	Շուկա	Ամրան Ա-500c	տն	0.308	400.000	123	200
		Հատակներ					0 000
1	11-2.	Բնահողի տոփանում խճով	100մ <sup>2</sup>	0.729	50.000	36	450
2	6-1	Պեմզաբետոնե նախաշերտ 80 մմ	մ <sup>3</sup>	9.537	40.000	381	480
3	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30մմ հաստ.	100 մ <sup>2</sup>	1.47	150.000	220	500
4	11-135	Հատակների կառուցում սալիկներից /կերամզրամիտե սալ /400*400սսսինձ - 4մմ	100 մ <sup>2</sup>	0.804	900.000	723	500
5	11-191	Լամինատե հատակների կառուցում-8 մմ հաստ /սպունգով և շրիշակներով/	մ <sup>2</sup>	66.6	7.000	466	200
6	15-82	Շրիշակների կառուցում կերամզրամիտից H=15սմ	100մ <sup>2</sup>	0.0755	900.000	67	950
		Տանիք					0 000
1	46-96	Տանիքի քանդում մետաղական ալիք. քիթեղից	100 մ <sup>2</sup>	1.20	50.000	60	000
2	10-70. k=0,5	Տանիքի փայտանյութի քանդում	մ <sup>3</sup>	2.3	15.000	34	500
3	23-227	Շին.աղբի բարձում ինքնաթին.	տն	2.50	1.000	2	500
4	Գ310-5	Շին.աղբի Տեղափոխում 5կմ	տն	2.50	1.000	2	500
5	12-288-1	Ջերմամեկուսիչ շերտ խարամից	մ <sup>3</sup>	12.20	10.000	122	000
6	12-299	Ց/ավազային հարթեցուցիչ շերտի կառուցում 20մմ հաստ.	100 մ <sup>2</sup>	0.810	100.000	81	000
7	13-225	Գուլոշամեկուսացում ռուբերոիդով	մ <sup>2</sup>	0.81	2.000	1	20
8	10-70.	Ծպեղնատղի տեղադրում (մարթակ,կանգն,մատերյատ,թեքան)	մ <sup>3</sup>	5.49	180.000	988	000
9	9-24,	Ալիքավոր ցինկապատ քիթեղ 0.5 մմ	100 մ <sup>2</sup>	2.32	600.000	1392	000
10	Շուկա	Ինքնաշաղաթող հեղուս	հատ	1392.0	0.020	27	40
11	Շուկա	Չորսու /կավարամած 60*50/	մ <sup>3</sup>	1.74	160.000	278	000
12	12-280	Գազաթնագծի կառուցում ց/քիթեղից 0,55 մմ	100մ <sup>2</sup>	0.086	400.000	34	000
13	10-201 37-1	Փայտանյութի մշակում հակամեխիչ և հակահրդեհային լուծույթով	մ <sup>3</sup>	5.65	7.000	39	50
14	10-203 37-3	Կավարամածի մշակում հակամեխիչ և հակահրդեհային լուծույթով	100 մ <sup>2</sup>	2.32	30.000	69	000
15	12-280	Ցվիկի երեսապատում ց/քիթեղից 0,55 մմ	100մ <sup>2</sup>	0.213	400.000	85	000
16	6-86.	Խարիսխի տեղադրում անցքերում / Ա-2/	տն	0.0234	400.000	9	60
17	10-23	Ցվիկի կառուցում տախտակից-25 մմ	մ <sup>2</sup>	12.7	2.000	25	000
18	Շուկա	Տախտակ ցվիկի համար	մ <sup>3</sup>	0.16	160.000	25	000
19	23-47	Անցքերի գայլիկումում 370 մմ խորությամբ	100անցք		90.000	6	000
20	46-71	Անցքերի ցանեմտացում	մ <sup>3</sup>		0.009	0	000
		Բացվածքներ					0 000



1	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում 6 սմ /բացվող/ (օտար.պրոֆիլ,սպ, 4 խցիկ)	մ <sup>2</sup>	6.48	32.000	207 360
2	Շուկա	Մետաղապլաստե պատուհանների տեղադրում 6 սմ /բացվող/ (օտար.պրոֆիլ,սպ, 4 խցիկ)	մ <sup>2</sup>	9.72	32.000	311 040
3	Շուկա	Մետաղապլաստե վերնափեղկի տեղադրում 6 սմ /բացվող/ (օտար.պրոֆիլ,սպ, 4 խցիկ)	մ <sup>2</sup>	1.36	32.000	43 520
4	Շուկա	Այլումինե դռան տեղադրում (օտարերկրյա պրոֆիլ4+4, սպիտակ,թերմոկամրջով) 60 սմ հաստ	մ <sup>2</sup>	1.98	60.000	118 800
5	Շուկա	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում 6 սմ (օտարերկրյա պրոֆիլ, սպիտակ գույն)	մ <sup>2</sup>	12.42	40.000	496 800
6	7-51.	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում	մ <sup>2</sup>	2.88	3.000	8 640
7	Շուկա	Մետաղապլաստե պատուհանագոգերի տեղադրում /30 սմ լայնութ./	գմ	9.6	3.000	28 800
8	15-210	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափարկի տակ գ/ավ. սվադի իրականացում	100մ	0.11	50.000	5 500
9	12-280	Արտաքին պատուհանագոգերի արցունքաթափարկի երեսապատում գ/քիթողով	100մ <sup>2</sup>	0.022	400.000	8 800
10	23-172	Պատուհանների քանդում	100 մ <sup>2</sup>	0.045	100.000	4 500
11	8-163	Բացվածքների շարվածք կանոնավոր ձևի տուֆ քարով	մ <sup>3</sup>	2.80	25.000	70 000
12	15-246-1	Պատերի սվադում գաջի շաղախով Հարդարման աշխատանքներ	100 մ <sup>2</sup>	0.045	250.000	11 250 0 000
1	15-246-1	Պատերի սվադում գաջի շաղախով	100 մ <sup>2</sup>	3.211	250.000	802 750
2	15-247-1	Առաստաղի սվադում գաջի շաղախով	100 մ <sup>2</sup>	1.470	250.000	367 500
3	15-277-1	Շեպերի սվադում գաջի շաղախով	100 մ <sup>2</sup>	0.126	400.000	50 400
4	15-210	Արտաքին շեպերի սվադում գ/ա շաղախ շաղախով	100մ	0.43	80.000	34 400
5	15-201	Արտաքին պատերի սվադ գ/ա շաղախով	100մ <sup>2</sup>	1.128	150.000	169 200
6	15-521	Արտաքին պատերի և շեպերի ներկում ֆա սաղախին ներկով	100 մ <sup>2</sup>	1.171	70.000	81 970
7	7-334	Ցանցերի ձգում պատերով /Ա - 1/	տն	0.0730	50.000	3 650
8	ինՖ տեղ	Ցանց 4մմ 100*100 մմ Եթ	մ <sup>2</sup>	35.2	1.500	52 800
9	6-86.	Խարիխի տեղադրում անցքերում	տն	0.148	400.000	59 200
10	15-20-1 15-60	Ճակատների երեսապատում տուֆ սալերով 3սմ հաստությամբ /Արթիկ, չիլկված/	մ <sup>2</sup>	35.2	10.000	352 000
11	15-568	Շեպերի յուղաներկում	100մ <sup>2</sup>	0.126	100.000	12 600
12	15-660	Պատերի ներկում լատեքսով բարելաված որակի	100 մ <sup>2</sup>	3.574	170.000	607 580
13	15-661	Առաստաղների ներկում լատեքսով բարելավված որակի	100 մ <sup>2</sup>	1.47	170.000	249 900
14	8-194	Արտաքին աշխատանքների համար տախտակամածի կառուցում	100 մ <sup>2</sup>	0.65	100.000	65 000
		<b>Հովիար</b>				0 000
1	9-10.	Հովիարի կառուցում մետաղական ուղղանկյունաձև խողովակներից /առանց նյութի արժեքի/	100 մ <sup>2</sup>	0.04	100.000	4 000
2	Շուկա	Մետաղական խողովակ 20*40*2	մ	4.5	1.000	4 500
3	Շուկա	Մետաղական խողովակ 15*40*2	մ	10.9	1.000	10 900
4	Շուկա	Մետաղական անկյունակ 45*4	մ	1.5	1.000	1 500
5	Շուկա	Երկշերտ պլաստիկ	մ <sup>2</sup>	4.0	3.000	12 000
6	Շուկա	Դյուբել մեխ	հատ	6.0	0.100	0 600
7	15-614	Մետաղական էլեմենտների յուղաներկում Սիջնորմներ	100 մ <sup>2</sup>	0.025	100.000	2 500 0 000
1	8-140	Սիջնորմների կառուցում 10 սմ հաստ. պեմզաբլոկից	մ <sup>3</sup>	2.17	30.000	65 00
2	11-11.	պեմզաբլոկի անցքերի լիցք թեթև բետոն Բ - 7.5	մ <sup>3</sup>	1.02	30.000	30 600
3	Շուկա	Սիջնորմների ամրանավորում Ա-1	տն	0.0299	400.000	11 956
4	6-170	Ե/բ միաձույլ բարավորի կառուցում Վ-15 բետոնից	մ <sup>3</sup>	0.07	70 000	4 900
5	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.0300	400 000	0 32
6	Շուկա	Ամրան Ա-3 -12 մմ	տն	0.008	400 000	1 008
		Բետոնե միաձույլ ամրանավորում Ա - 2 (1 հատ)				0 00



1	11-11.	Բետոնե նախաշերտի կառուցում	մ <sup>3</sup>	0.15	40.000	6.000
2	11-2.	Բնահողի տոփանում խճով	100մ <sup>2</sup>	0.027	50.000	1.350
3	11-55	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30սմ հաստ. 11-56	100 մ <sup>2</sup>	0.027	150.000	4.050
4	6-90.	Բետոնե միաձուլլ աստիճանների կառուցում Վ-12.5 բետոնից	մ <sup>3</sup>	0.2	40.000	8.000
5	Շուկա	Ամրան Ա-1	տն	0.0047	400.000	1.880
6	Շուկա	Ամրան Ա-3	տն	0.010	400.000	4.080
		Սալվածք				0.000
1	11-2.	Բնահողի տոփանում խճով	100մ <sup>2</sup>	0.27	50.000	13.400
2	11-11.	Բետոնե սալվածք 100սմ հաստությամբ	մ <sup>3</sup>	2.70	40.000	108.000
3	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30սմ հաստ.	100 մ <sup>2</sup>	0.268	150.000	40.200
		Սալվածք/զոյություն ունեցող մասնաշենքի/				0.000
1	1-961	Բնահողի մշակում ձեռքով 3-րդ կարգի	մ <sup>3</sup>	9.0	5.000	45.000
2	11-2.	Բնահողի տոփանում խճով	100մ <sup>2</sup>	0.760	50.000	38.000
3	11-11.	Բետոնե սալվածք 100 մմ հաստությամբ	մ <sup>3</sup>	7.60	40.000	304.000
4	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30սմ հաստ.	100 մ <sup>2</sup>	0.760	150.000	114.000
5	15-298	Արտաքին պատերի սվաղում ց/ավազ շաղախով ամրանային ցանցի վրա 50*50 բջիչ	100մ <sup>2</sup>	1.45	150.000	217.500
		Բազվածքներ				0.000
1	23-143	Գոյ. ունեցող քարե պատերի քանդում	մ <sup>3</sup>	1.5	10.000	15.000
2	46-7	Բազվածքների ամրացում անկյունակից Պ-1/անցքերի գայլիկնունով/	տն	0.1646	100.000	16.460
3	23-47	Անցքերի գայլիկնունում 370 մմ խորությամբ	100անցք	0.32	50.000	16.000
4	6-86.	հարիսխի տեղադրում անցքերում / Ա-2/	տն	0.0086	400.000	3.456
5	հնՖ տեղ	Մետաղական անկյունակ 100*100*8	մ	10.8	6.000	64.800
6	հնՖ տեղ	Մետաղական անկյունակ 50*50*5	մ	1.30	2.000	2.600
7	հնՖ տեղ	Պողպատ շերտավոր 50*4	մ	12.00	0.700	8.400
8	15-298	սավաղում ց/շաղախով	100մ <sup>2</sup>	0.054	300.000	16.200
9	15-304	Ամրանավորում ցանցով ռաբիգա 50*50	100մ <sup>2</sup>	0.054	70.000	3.780
10	15-614	Մետաղական կոնստրուկցիաների յուղամերկում	100 մ <sup>2</sup>	0.043	100.000	4.300
11	46-71	Խոռչների վերականգնում Վ-15 բետոնով	մ <sup>3</sup>	0.3	40.000	12.000
		Հարթակ դեպի մասնաշենք տանող				0.000
1	11-2.	Բնահողի տոփանում խճով	100մ <sup>2</sup>	0.340	50.000	17.000
2	11-11.	բետոնե նախաշերտի կառուցում 100սմ	մ <sup>3</sup>	3.40	40.000	136.000
3	11-55 11-56	Ց/ավազային հարթեցուցիչ շերտ 30սմ հաստ.	100 մ <sup>2</sup>	0.340	150.000	51.000
4	11-221	Հարթակների երեսպատում բազալտե սալերով - 3 սմ հաստությամբ	մ <sup>2</sup>	34.0	10.000	340.000
5	27-78	Բետոնե հավաքովի եզրաքարերի տեղադրում 200*80	մ	42.0	1.000	42.000
		Ներքին էլ. լուսավորություն				0.000
1	8-599-1	Առաստաղի լուսատու 200 վտ շիկացման լամպով ԼՊՕ 21-200	հատ	4.0	5.000	20.000
2	8-599-1	Լյումենեացնետային լուսատուի տեղադրում ԼՊՕ - 2*36	հատ	16.0	6.000	96.000
3	8-599-1	Առաստաղի լուսատու 100 վտ շիկացման լամպով ԼՊՕ 21-100	հատ	7.0	4.000	28.000
4	8-598-1	Առաստաղային լուսատուի տեղադրում շիկացման լամպով ԼՊՕ 21-60	հատ	2.0	4.000	8.000
5	8-591-7	Երկբևե վարդակ ՍԻ-220Վ,6Ա	հատ	13.0	1.500	19.500
6	8-591-2	Էլեկտրական անջատիչ երկստեղ միաբևե	հատ	5.0	1.500	7.500
7	8-591-2	Էլեկտրական անջատիչ միաստեղ միաբևե	հատ	4.0	1.500	6.000
8	10-975-8	Տուփ բաժանարար	100հտ	0.12	50.000	6.000
9	10-975-8	Տուփ վարդակների և անջատիչների	100հտ	0.22	50.000	11.000
10	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 2*2.5մմ <sup>2</sup>	100 մ	2.25	60.000	135.000
11	8-402-2	Հաղորդալարի անցկացում ՊՊՎ 3*2.5մմ <sup>2</sup>	100 մ	0.30	70.000	21.000
12		Խմբային վահան /պլաստմասե արկղ/ 8 տեղ	հտ		5.000	5.000
13	8-525-1	Միաբևե ավտոմատ անջատիչ 50 Ա	հատ		3.000	3.000
14	8-525-1	Միաբևե ավտոմատ անջատիչ 16 Ա	հտ		10.000	10.000
15	8-146-1	Մալուխի անցկացում 2*6մմ <sup>2</sup>	100մ		4.730	4.730



						20793	651
						1039	683
						21833	833
						4366	667
						26200	000

Կապալառու

, ԳՐԵՂԵՒՆ՝ ՍՊԸ

ՀՀ Արագածոտնի մարզ գ. Փարպի

Յունիբանկ ՓԲԸ Աշտարակ մ/ճ

ՀՎՀՀ՝ 05017392

հ/հ 24122000074900

Տնօրեն՝

ՊԱՏՎԻԴԱՏՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան


ՀՀ Արագածոտնի մարզ, ք. Աշտարակի վ. Պետրոսյան 4

ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

հ/հ 900441000065 ՀՎՀՀ 05004247

Աշխատակազմի ղեկավար՝

Հ. Գևորգյան



Կարապետյան

Կնքված աշխատանքների կատարման  
թիվ ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5-ԿՐԹԱԿԱՆ-5 գնման պայմանագրի

**ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ**

Ձորագլուխ համայնքի դպրոցի վերանորոգում  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ



N Ը/Կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Ծավալը ( ՀՀ դրամ)	Աշխատանքների կատարման ժամկետը	
			Սկիզբը	Ավարտը
1	Ձորագլուխ համայնքի դպրոցի վերանորոգում	26 200 000	Պայմանագրի կնքման օրը	10.12.2014թ.

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ Արագածոտնի մարզպետարան  
 ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ.  
 Պետրոսյան 4  
 ՀՀ Ֆինանսների նախարարության  
 գործառնական վարչություն  
 h/h 900441000065 ՀՎՀՀ 05004247  
 Աշխատակազմի ղեկավար՝

**Կապալառու**

« ԳՐԷՂՇԻՆ » ՍՊԸ  
 ՀՀ Արագածոտնի մարզ գ. Փարպի  
 Յունիբանկ ՓԲԸ Աշտարակ մ/6  
 ՀՎՀՀ՝ 05017392  
 Խ/Խ՝ 24122000074900



Կարապետյան

Կնքված աշխատանքների կատարման  
թիվ ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱՇՁԲ-14/5-ԿՐԹԱԿԱՆ-5 գնման պայմանագրի

**ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

N	Աշխատանքների անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 20 14 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1.	Զորագլուխ համայնքի դպրոցի վերանորոգում	-	-	-	-	-	0	26 200 000	26 200 000	26 200 000	26 200 000	26 200 000	26 200 000	26 200 000

\*Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**


ՀՀ Արագածոտի մարզպետարան  
ՀՀ Արագածոտնի մարզ, ք.Աշտարակի Վ.  
Պետրոսյան 4  
ՀՀ Ֆինանսների նախարարության  
գործառնական վարչություն  
Խ/Խ 900441000065 ՀՎՀՀ 05004247  
Աշխատակազմի ղեկավար՝



(ստորագրություն)

**Կապալառու**

«ԳՐԷՂՇԻՆ» ՍՊԸ  
ՀՀ Արագածոտնի մարզ գ. Փարպի  
Յունիբանկ ՓԲԸ Աշտարակ մ/6  
ՀՎՀՀ 05017392  
Խ/Խ 2412100074900



Ստորագրության

կնքված աշխատանքների կատարման  
թիվ ՀՀԱՄ-ԲԸԱՀ-ԱԵՁԲ-14/5-ԿՐԹԱԿԱՆ-5 գնման պայմանագրի

Կատարող  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

Պատվիրատու  
\_\_\_\_\_  
գտնվելու վայրը \_\_\_\_\_  
հհ \_\_\_\_\_  
հվհհ \_\_\_\_\_

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N  
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<\_\_>> <<\_\_\_\_\_>> 20 թ.

Պայմանագրի \_\_\_\_\_ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<\_\_>> <<\_\_\_\_\_>> 20 թ.

Պայմանագրի համարը՝ \_\_\_\_\_  
Պատվիրատուն՝ \_\_\_\_\_ ի \_\_\_\_\_ դեմ

և Կատարողը՝ \_\_\_\_\_ դեմ \_\_\_\_\_, հիմք  
ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված աշխատանքները,  
մատակարարումները և ծառայությունները (այսուհետև՝ աշխատանքներ)  
համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և  
գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը \_\_\_\_\_ 20\_\_թ-ից  
\_\_\_\_\_ 20\_\_ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ  
աշխատանքները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Աշխատանքների կատարման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամա- նակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ աշխատանքների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրեր  
հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
Ազգանուն, Անուն  
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց

\_\_\_\_\_  
ստորագրություն  
\_\_\_\_\_  
Ազգանուն, Անուն  
Կ.Տ.